ՆՈՅՄԵԴ ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0054 Դավթաշեն, 2-րդ թաղ., 46/1
+374 99 331-331
info@noymed.com | http://noymed.com
NoyMed LLC
2-nd District Davtashen, 46/1 bld., Yerevan 0054, Armenia
+374 99 331-331
info@noymed.com | http://noymed.com

ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ, ք. Գյումրի *3/22/2022 թ.*

«Նոյմեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գրանցման համար՝ 271.110.965816, ՀՎՀՀ՝ 01276596) (այսուհետ նաև՝ «**Ընկերություն**»), ի դեմս՝ տնօրեն Վահագն Մելքոնյանի մի կողմից,
Եվ
«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ «**Համալսարան**»), ի դեմս՝ ռեկտոր Երվանդ Սերոբյանի մյուս կողմից,
(Ընկերությունը և Համալսարանը՝ համատեղ հիշատակման դեպքում այսուհետ՝ «**Կողմեր**»)

- Առանձնակի կարևորելով բարձրագույն կրթության դերը Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գործում,
- Նկատի ունենալով մասնագիտական ներուժի շարունակական վերապատրաստման անհրաժեշտությունը,
- Նպատակ հետապնդելով խթանել ՀՀ Շիրակի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը,
- Ցանկանալով անհրաժեշտ ջանքեր գործադրել գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ,
- Գիտակցելով երկկողմանի համագործակցության կարևորությունը վերը նշված նպատակների իրագործման առումով,

Սույն հուշագրով (այսուհետ՝ «**Հուշագիր**») Կողմերը արտահայտում են իրենց մտադրությունը կառուցելու իրենց համագործակցությունը ներքոհիշյալի շուրջ.

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. Համագործակցությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով՝

- Մասնագետների և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում և վերարտակավորում,
- Ուսումնական ծրագրերի պարբերական թարմացում և զարգացում,
- Խթանում նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- Բարձրագույն կրթության և արդյունաբերության փոխշահավետ ու արդյունավետ կապի ձևավորում,
- Պետական և մասնավոր հատվածների համատեղ ծրագրերի իրականացում,
- Նորարական ծրագրերի իրակացմանը խթանում և աջակցում՝ օգտագործելով Կողմերի հնարավորությունները,

ՆՈՅՄԵԴ ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0054 Դավթաշեն, 2-րդ թաղ., 46/1
+374 99 331-331
info@noymed.com | http://noymed.com
NoyMed LLC
2-nd District Davtashen, 46/1 bld., Yerevan 0054, Armenia
+374 99 331-331
info@noymed.com | http://noymed.com

- Համալսարանի լսարաններում տարաբնույթ դասընթացների, սեմինարների և շնորհանդեսների կազմակերպում,
- Համալսարանի ուսանողներին արտադրական պրակտիկայի ներգրավում Ընկերությունում,
- Ընկերության կողմից կազմակերպվող ուսումնական ծրագրերի և վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ ուսանողներին իրազեկում և ներգրավում:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1. Հուշագրով նախանշված ուղղություններով համագործակցությունը գործնականում կազմակերպելու և իրագործելու համար Հուշագրի ստորագրմանը հաջորդիվ, Կողմերը դիտարկում են կնքել համապատասխան համաձայնագրեր և (կամ) պայմանագրեր, որոնց միջոցով առավել համապարփակ կերպով կկարգավորվեն տվյալ ուղղություններով Կողմերի իրավահարաբերությունները:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Հուշագիրը մտադրությունների վերաբերյալ հայտարարություն է՝ համաձայն ՀՀ օրենսդրության, և ինքնին որևէ իրավական պարտավորություններ չի առաջացնում Կողմերի համար:
3.2. Հուշագրի դրույթների չկատարումը չի կարող հիմք հանդիսանալ չկատարած Կողմին պատասխանատվության ենթարկելու և (կամ) վնասի փոխհատուցում պահանջելու համար:
3.3. Կողմերը գործում են անկախ, և Հուշագրի ոչ մի դույթ չպետք է համարվի Կողմերի միջև որևէ ընկերակցության, համատեղ ձեռնարկության, գործակալական, ներկայացուցչական կամ նմանատիպ այլ հարաբերությունների ստեղծում:
3.4. Հուշագիրը չի ստեղծում խոչընդոտներ Կողմերից որևէ մեկի համար՝ արտահայտելու նմանօրինակ մտադրություններ և իրականացնելու նմանօրինակ գործունեություն ինչպես առանձին, այնպես էլ համատեղ՝ ցանկացած երրորդ կողմի հետ:
3.5. Հուշագրի կարգավորման առարկայից դուրս ծառայությունների, ներառյալ՝ խորհրդատվական, ցանկացած գնում կկարգավորվի կողմերի միջև կնքվող համապատասխան համաձայնություններով, որոնք պետք է լրացուցիչ համաձայնեցվեն համապատասխան գների, ինչպես նաև հեղինակային իրավունքի հարցերի առումով:
3.6. Կողմերը առանց վերապահումների փաստում են, որ իրենք իրավասու են ստորագրելու Հուշագիրը:
3.7. Հուշագրի կատարման հետ կապված բորոր վեճերը կամ տարաձայնությունները պետք է լուծվեն բանակցությունների միջոցով:

ՆՈՅՄԵԴ ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0054 Դավթաշեն, 2-րդ թաղ., 46/1
+374 99 331-331
info@noymed.com | http://noymed.com
NoyMed LLC
2-nd District Davtashen, 46/1 bld., Yerevan 0054, Armenia
+374 99 331-331
info@noymed.com | http://noymed.com

3.8. Հուշագիրը կազմված է երկու օրինակից. յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
3.9. Կողմերը կրում են Հուշագրին վերաբերող ցանկացած ծախսերը հոգալու բեռը ինքնուրույն:
3.10. Հուշագրում հիշատակված տեղեկատվությունը գաղտնի չէ: Ըստ անհրաժեշտության՝ Կողմերը կարող են ստորագրել համապատասխան չբացահայտման համաձայնագիր:

ԿՈՂՄԵՐԻ ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Համալսարան»	«Նոյմեդ» ՍՊԸ
Ռեկտոր՝ Երվանդ Սերոբյան	Տնօրեն՝ Վահագն Մելքոնյան
ստորագրություն	ստորագրություն